# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Ինտերմեդ Գրուպ ՍՊԸ-ն ՈՒԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/41 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | |
|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 38 | POWERSEAL | Olympus | Առաջադեմ բիպոլյար մկրատ կոագուլացիոն էրգոնոմիկ ատրճանակային բռնակով էնդոսկոպիկ միջամտությունների համար ձեռքի ակտիվացման հնարավորությամբ: Գործիքը ստերիլ է, մեկանգամյա օգտագործման, նախատեսված լապարոսկոպիկ և բաց վիրահատական միջամտությունների համար, ապահովում է մինչև 7 մմ տրամագծով անոթների, ներառյալ թոքային անոթների, հուսալի կոագուլյացիա և հատում՝ ձևավորելով ամուր անոթային «fusion-seal» հերմետիկ շերտ: Միջին կոագուլացիայի ժամանակը չի գերազանցում 3,3 վայրկյանը: Աշխատանքային մասը պատրաստված է բժշկական նշանակության կոռոզիոնակայուն պողպատից՝ էլեկտրամեկուսացված ցողունով, ապահովելով բիպոլյար բարձր հաճախականության (RF) էներգիայի վերահսկվող և ադապտիվ մոդուլացված մատակարարում, նվազագույն լատերալ ջերմային տարածում, ցածր մնացորդային ջերմություն ակտիվացումից հետո և հյուսվածքների կպչունության նվազեցում: Գործիքը ունի կոր և նեղացող դիստալ ծնոտային ծայր՝ բարդ անատոմիական |

| | | | |
|---|---|---|---|
| | | | գոտիների հասանելիության համար, երկաստիճան (double-action) ծնոտների փակման մեխանիզմ՝ հյուսվածքների հուսալի բռնման և արդյունավետ դիսեկցիայի նպատակով, երկարացված ծնոտներ և հատման գիծ՝ կոագուլյացիայի և հատման արդյունավետության բարձրացման համար։ Ցողունի տրամագիծը 5 մմ, ցողունը՝ 35 սմ երկարությամբ՝ լապարոսկոպիկ վրահատություններում կիրառելու համար։ Կոնստրուկցիան ապահովում է ցողունի առնվազն 330° սահուն ռոտացիա՝ օպերացիոն դաշտում ճշգրիտ դիրքավորման համար, շրջանաձև (wrap-around) էներգիայի ակտիվացման կոճակ՝ էներգիայի մատակարարման հնարավորությամբ ամբողջությամբ կամ մասնակի փակված ծնոտների պայմաններում, նվազեցված ուժով գործող հատման ակտիվացման մեխանիզմ՝ առանց կտրման ամրության և դիմացկունության նվազեցման, ինչպես նաև օպտիմիզացված սեղմման ուժ ծնոտների փակման ժամանակ՝ պահպանելով անոթների կայուն հերմետիզացիայի համար անհրաժեշտ կոմպրեսիոն ճնշումը։ Սարքը ապահովում է ծնոտների latch-on և latch-off ֆիքսացիոն ռեժիմներ՝ վիրաբուժական տեխնիկայի պահանջներին համապատասխան և համատեղելի է կլինիկայում առկա Olympus ընկերության ESG-410 էլեկտրավիրաբուժական գեներատորների հետ և ունի պաշտոնական համատեղելիության փաստաթուղթ։ |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ООО Интермед Груп в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՈՒԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/41 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | |
|---|---|---|---|
| | фирменное наименование | наименование производителя | технические характеристики |
| 38 | - | - | - |